Արարատ Ստեփանյան

# ՀԱՅԱԶԳԻ ՊԵԽՏ ԵՎ ԽԱՉԱՏՈՒՐ ԴՔՍԵՐԸ

***Բանալի բառեր.*** Անտիոք, Պեխտ, արտագաղթ, Անդրիուն բերդ, դավադրություն, պռոքսիմոս, Վասակ Պահլավունի, դուքս, Խաչատուր, Եպիխտ:

ԺԱ դ. Անիի Բագրատունյաց թագավորության անկմամբ (1045 թ.) պայմանավորված՝ հայության արտագաղթերը սկսեցին զանգվածային բնույթ կրել: Բյուզանդական կայսրությունը հայրենիքից հեռացված զորահրամանատարներին տալիս էր առաձնաշնորհումներ և նշանակում քաղաքների ղեկավար պաշտոնների, ինչպես նաև տրամադրում էր հողատարածքներ:

Խնդրո առարկա ժամանակահատվածում հայությունը, ի թիվս կայսրությանը ենթակա այլ շրջանների, արտագաղթի հետևանքով հաստատվեց նաև Անտիոքում: Այստեղ հայերը գործուն մասնակցություն են ունեցել քաղաքի կառավարմանը: Դեռևս Ժ դ. երկրորդ կեսին (969 թ.) Անտիոքը կառավարում էին հայազգի դքսեր Միքայել Վարդը և Դամիանոսը[1]:

ԺԱ դ. պատմագրական աղբյուրներում որպես Անտիոքի հայազգի կառավարիչներ հիշատակում են Պեխտը և Խաչատուրը, իսկ վերջինիս մահից հետո նաև Գրիգոր Մագիստրոսի որդի Վասակ Պահլավունուն[2]:

Պատմագիտության մեջ Պեխտի և Խաչատուրի հետ կապված գոյություն ունի տարակարծություն: Հետազոտողների մի մասը նրանց նույն անձն է համարում, սակայն որոշ ուսումնասիրողներ էլ հակառակ տեսակետ են արտահայտում և գտնում, որ նրանք տարբեր գործիչներ են և նրանց նույնացման համար բավարար կռվաններ չկան: Խնդիրը կարիք ունի նորովի և համակողմանի քննության:

## Պեխտը

Պեխտի մասին տեղեկություններ պահպանվել են հայկական պատմական աղբյուրներում, որտեղ հիշատակվում է հետևյալ անուններով՝ Պեխտ, Եպիխտ[3], Բեղդ[4]: Հ. Բարթիկյանը կարծում է, որ Պեխտը (նաև Եպիխտ) անուն չէ, այլ հունարեն «էպիխտես» բառն է, որ նշանակում է վերակացու[5]: Ըստ երևույթին Պեխտն Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայրենիքից իր զորքով հեռացած իշխաններից մեկն էր: Մատթեոս Ուռհայեցին Պեխտին բնութագրում է որպես քաջ զորական, ով Անտիոքի դուքսն էր. «Եւ մի ոմն ի Հայոց քաջ զօրականացն … Պեխտ անուն, և էր տուկ Անտիոքայ քաղաքին»[6]: Պեխտի մասին նույն վերաբերմունքն է արտահայտում Սմբատ Սպարապետը. «…Պեխտն, իշխանն Հայոց, այր քաջ, տանէն **Շիրակայ**[7]»:

Մատթեոս Ուռհայեցին, նկարագելով 1065 թ. Ուռհայում սելջուկ-թուրքերի իրականացրած հարձակումը, խոսում է նաև այդ ժամանակ քաղաքում գտնվող Անտիոքի դուքս Պեխտի մասին, որը կազմակերպեց քաղաքի պաշտպանությունը: Պեխտը իր զինվորներով գիշերով հասնում է Նշենիկ բերդ[8]: Այստեղ, մարտի բռնվելով թուրքերի

---

[1] Տե՛ս Charanis P., The Armenians in the Byzantine Empire, Lisbon, 1963, էջ 45, Բոռնազյան Ս., Հայաստանը և սելջուկները 11-12-րդ դդ., Ե., 1980, էջ 180:

[2] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005, էջ 418:

[3] Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, էջ 214:

[4] Տե՛ս Վարդան վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862, էջ 105:

[5] Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Բարթիկյան Հ., Ե., 1973, էջ 326, ծն թ. 51:

[6] Մատթէոս Ուռհայեցի, էջ 157:

[7] Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 84:

[8] Տեղադրությունը մնում է անհայտ, «տեղանունների բառարանում» այն նշվում է, որպես «Բերդ բերդաքաղաք Վերին (Հայոց) Միջագետքում, Եդեսիայի շրջանում»: Տե՛ս Հակոբյան Թ. և այլք, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 4, Ե., էջ 10: Իսկ Մ. Յովհաննէսեանի մոտ կարդում ենք. «Ամանոսեան լեռներու կատարներուն վրայ բարձրացող բազմաթիւ բերդերէն էր Նշենիկ, որուն բուն

հետ, հմուտ ռազմավարին հաջողվում է նրանց մի մասին պարտության մատնել, իսկ զորքի մնացած մասն էլ դիմում է փախուստի: Ի դեպ, Ուռհայի դուքսը, Պեխտին օ-ժանդակելու փոխարեն զորք տրամադրեց իր պռոքսիմոսին[1] և դուրս բերեց նրա դեմ, սակայն նրան չհաջողվեց խոչընդոտել Պեխտին ու վերջինիս քաջության շնորհիվ Ուռհան զերծ մնաց թուրքական ավերածություններից: Նա Կոստանդին Ժ Դուկաս կայսերը (1059-1067) ուղղված նամակում ներկայացրեց քաղաքի դքսի և նրա ստորակայի դավաճանությունը: Կայսրը դքսին հեռացրեց պաշտոնից, իսկ պռոքսիմոսը սպանվեց[2]:

Արաբ պատմիչ Քամալ ադ-Դինը պատմում է, որ 1069 թ. մայիսի 26-ին Անտիոքի դուքսը (?) պաշարում և գրավում է Ասֆունայի ամրոցը[3]: Հետազոտողները հավանական են համարում, որ ամրոցը գրավողը եղել է Պեխտը[4], մենք ևս հակված ենք այս տեսակետին, քանի որ 1069 թ. Խաչատուրը, ինչպես ստորև կտեսնենք, կայսրությունից հանձնարարություն ստանալով, պայքար էր մղում սելջուկ-թուրքերի դեմ: Ուստի պետք է հետևեցնել, որ Ասֆունայի ամրոցը նվաճողը Պեխտն էր:

Մատթեոս Ուռհայեցու հաջորդ հիշատակումը հայ իշխանի մասին վերաբերում է 1078 թ.[5]: Այստեղ պատմիչի ուշագրավ հիշատակումից ակներև է դառնում, որ կայսրը, նկատի ունենալով Պեխտի քաջ լինելը, նրան հունադավան դարձրեց, սակայն նա ծածուկ հավատարիմ մնաց սուրբ Գրիգորի հավատին[6]: Այնուհետև խոսում է նրա մահվան մասին: Սպանությունը տեղի է ունեցել Անդրիուն բերդում[7], երբ նա հիվանդ էր և նրան է այցելում կայսեր կողմից խոստովանահայր նշանակված հույն աբեղան: Վերջինս հարձակվում է քնած Պեխտի վրա և բարձով խեղդամահ անում: Պեխտի զինվորները, բռնելով հույն աբեղային, խոշտանգեցին, այնուհետև բերդի պարսպից ցած նետեցին[8]: Նույն դեպքերին անդրադառնալով՝ Վարդան վարդապետը ևս փաստում է, որ Պեխտը զոհ է դարձել Անդրիուն բերդում հույն հոգևորական Աբելի դավադրությանը[9]: Պատմական աղբյուրներում Պեխտի մասին այլ հիշատակություն չկա: Փաստորեն, կարող ենք նշել, որ գործ ունենք Անտիոք քաղաքի հայազգի նշանավոր դքսի հետ: Ի միջի այլոց, նրա Անտիոք քաղաքն էլ, ինչպես կտեսնենք, չի նույնանում բուն կամ մեծ Անտիոքին[10]:

## Խաչատուրը

Հայկական սկզբնաղբյուրներում Խաչատուրի մասին հիշատակություններ չունենք: Նրան վերաբերող տեղեկություններ առկա են բյուզանդական աղբյուրներում: Միքայել Ատտալիատեսը նրան ավնանում է. «Մեծ Անտիոքի կատեպան[11] ազգությամբ

---

տեղագրութիւնը մեզի անծանօթ կը մնայ, հաւանաբար Անտիոքի շրջանի մէջ կը գտնուէր»: Յովհաննէսեան Մ., Հայկական Կիլիկիո բերդերը ու բերդաքաղաքները, Վենետիկ, 1989, էջ 510:

[1] Պռոքսիմոսը բյուզանդական քաղաքացիական աստիճան է, որ լայն տարածում ուներ նաև Կիլիկիայի հայկական թագավորության մեջ: Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը, Բարթիկյան Հ., նշվ. աշխ., էջ 326-327, ծն թ. 52:

[2] Մատթէոս Ուռհայեցի, էջ 157-158:

[3] Ասֆունայի ամրոցը գտնվում էր Հյուսիսային Ասորիքում Ապամեայից արևելք: Տե՛ս Cahen C., La Syrie du Nord à l'époque de la Croisade, Paris, 1940, p. 162-163:

[4] Տե՛ս Dédéyan G., Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, vol. 1, Lisbonne, 2003, p. 37:

[5] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 418:

[6] Պետք է նշել, որ Պեխտը, ընդունելով քաղկեդոնականություն, միշտ ծածուկ դավանել է հայոց հավատը, թերևս սրանով կարելի է բացատրել պատմիչների դրական վերաբերմունքը նրա հանդեպ: Օրինակ՝ քաղկեդոնականություն ընդունած մյուս հայ իշխաններին (Փիլարտս Վարաժնունի) պատմիչները փորձել են օտարել հայ միջավայրից և բացասական բնորոշումներ են տվել:

[7] Տե՛ս Հակոբյան Թ. և այլք, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, Ե., 1986, էջ 260-261:

[8] Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, էջ 214-215:

[9] Տե՛ս Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մուկուա, 1861, էջ 140:

[10] Անտիոք քաղաք Ասորիքում՝ Որոնտես գետի ափին: Հիմնադրել է Սելևկիոս Նիկատորը Ք.ա 301 թ. և կոչել հոր՝ Անտիոքոսի անունով: Տե՛ս Հակոբյան Թ. և այլք, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, էջ 284:

[11] ԺԱ դարում կատեպան և դուքս տիտղոսներ կրողները նույն գործառույթներն ունեին և անգամ միևնույն անձնավորությունը հիշվում է այդ երկու տիտղոսներով: Դուքսն ու կատեպանը ենթարկվում էին սխոլ-

հայ Խաչատուր»[1], իսկ Հովհաննես Սկիլիցեսի շարունակողը նրան հիշատակում է որպես Անտիոքի դուքս, ով դեռ «անցյալում ցույց էր տվել իր բազում աչքի ընկնող առաքինությունները»[2]: Սկզբանղբյուրից կարելի է հետևեցնել, որ մինչ Անտիոքի դքսի պաշտոնը. Խաչատուրը հանդիսացել է զինվորական և կայսրությանը մատուցած ծառայությունների համար բարձրացել այդ աստիճանին: Խաչատուրի ռազմա-քաղաքական գործունեության սկիզբը համարվում է բյուզանդական կայսր Ռոմանոս Դ Դիոգենեսի (1067-1071 թթ.) կողմից 1068 թ. Անտիոքի դքսի պաշտոնին նշանակումը, որի համար և Խաչատուրը հավատարմորեն ծառայեց նրան: Մինչ այդ՝ 1067 թ. Անտիոքի դուքս է եղել Նիկեփորիցեսը, իսկ այնուհետև Նիկեփոր Վոտանիատեսը[3]:

1068 թ. բյուզանդական կայսր Ռոմանոս Դ Դիոգենեսը սկսեց սելջուկ-թուրքերի դեմ զորաշարժ, որի նպատակը կայսրության սամանների պաշտպանությունն էր, հակառակորդին տարածաշրջանից դուրս մղելը: Կայսեր այս ռազմարշավին և հակառակորդին դիմակայելու կարևոր գործում մեծ դեր է վերապահվում Անտիոքի դուքս Խաչատուրին: Սելջուկ-թուրքերը, սկսելով իրենց նվաճողական արշավանքները, պաշարում և ավերում են Իկոնիա քաղաքը[4]:

1069 թ. կայսրը Հերակլիայում գտնվելու ժամանակ տագմաներից[5] մի փոքր զորամաս է ուղարկում՝ միանալու Անտիոքի դուքս Խաչատուրին և հանձնարարում մարտ մղել հետ վերադարձող սելջուկ-թուրքերի դեմ[6]: Այս դեպքերի հետ կապված պատմական մյուս աղբյուրներից տարբերվող տեղեկություններ է հաղորդում Միքայել Ատտալիատեսը. «Խաչատուրը կայսրից կարգադրություն էր ստացել իրեն հանդիպել Մոպսուեստիայում (Մսիս) այնտեղից անցնող թուրքերին մարտ տալ, միանալ նաև Սելևկիայի լեռնային շրջաններում բնակվող հայերին, ովքեր կարգադրություն էին ստացել կիրճերում թուրքերի վրա հարձակվել և ինչքան հնարավոր է նրանց վնաս հասցնել»[7]: Այս արժեքավոր հիշատակումից ակներև է, որ Խաչատուրը սելջուկ-թուրքերի դեմ պայքարում համագործակցելու էր նաև Սելևկիայի լեռնային հատվածներում բնակվող հայրենակիցների հետ, ովքեր ունեին զինական ուժ և կայսեր դաշնակիցներն էին: Բացի այդ, հիշատակությունից երևում է, որ Սելևկիայի լեռնային շրջանի հայերը ունեին կիրճերում մարտեր վարելու հմտություն:

Խաչատուրը և տագմաների զորամասը սելջուկ-թուրքերին հանդիպեցին Մամեստիայում. սելջուկները ճեղքցին պաշտպանությունը և Սև (Ամանոսի) լեռնաշղթայի[8] Սարվանդիքար լեռն[9] անցնելով՝ գնացին դեպի Հալեպ[10]:

Սկզբանղբյուրների հաջորդ անդրադարձը Խաչատուրին վերաբերում է 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո ընկած դեպքերի նկարագրությանը: Մանազկերտում բյուզանդական բանակում տիրող անկազմակերպ վիճակը և զորապետերի՝

---

ների դոմեստիկոսին: ԺԱ դարի վերջից այդ տիտղոսն անհետանում է: Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 17, Բյուզանդական աղբյուրներ, Զ, Միքայել Ատտալիատես,, թարգմ. բնագրից առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 2015, էջ 246, ծնթ. 220:

[1] Միքայել Ատտալիատես, էջ 90:

[2] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 10, Բյուզանդական աղբյուրներ, Գ, Հովհաննես Սկիլիցես, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1979, էջ 231:

[3] Տե՛ս Լօրան Յ., Խաչատուր իշխան Անտիոքի 1068-1072, Հանդէս ամսօրեայ, 1930,. 1-12, էջ 307-310:

[4] Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 231:

[5] «Տագմաները այն զորքերն էին, որոնք կենտրոնացած էին մայրաքաղաքում կամ նրան մոտիկ նահանգներում: Տագմաների զորքերը գլխավորում էին դոմեստիկոսները...»: Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 15, Բյուզանդական աղբյուրներ, Ե, Թեոփանեսի Շարունակող, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Ե., 1990, էջ 293, ծն թ. 37:

[6] Տե՛ս Dédéyan G., նշվ. աշխ., էջ 34-35:

[7] Միքայել Ատտալիատես, էջ 72:

[8] Ամանոսի լեռնաշղթան արևելքից եզերում է Կիլիկիան:

[9] Լեռ Կիլիկիայում՝ Սև կամ Ամանոսի լեռների լեռնանցքներից մեկի մերձակայքում, ժամանակակից Թուրքիայի Հանրապետության Օսմանիե նահանգի վարչական սահմաններում: Նույնանուն բերդը գտնվում է տվյալ լեռան գագաթին: Տե՛ս Միքայել Ատտալիատես, էջ 234, ծն թ. 181, Թ. Հակոբյան և այլն, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, նշվ. աշխ էջ 207:

[10] Միքայել Ատտալիատես, էջ 73, Հովհաննես Սկիլիցես, էջ 231-232:

իրենց զորքով մարտից դուրս գալը կանխորոշեցին ճակատամարտի ելքը: Բյուզանդական զորքը պարտություն կրեց, իսկ կայսրը գերի ընկավ[1]: Գերվելուց հետո կայսրը ստիպված ծանր պայմաններով պայմանագիր կնքեց Սելջուկյան սուլթան Ալփ Արսլանի (1063-1072 թթ.) հետ, ինչը և առիթ հանդիսացավ կայսրությունում նրան գահազուրկ համարելուն: Գահին բազմեց Միքայել է Դուկասը (1071-1078 թթ.):

Գերությունից ազատվելուց հետո Ռոմանոս Դ Դիոգենեսը փորձեց վերականգել կորցրած իշխանությունը, այդ նպատակով կապ հաստատեց իրեն հավատարիմ զորահրամանատարների հետ, որոնց թվում էր և Անտիոքի դուքս Խաչատուրը: Իրեն միանալու առաջարկությամբ Խաչատուրին դիմել էր նաև Միքայել է Դուկասը, բայց նա մերժեց, քանի որ հանդիսանում էր Դիոգենեսի հավատարիմ դաշնակիցը: Բյուզանդական նոր կայսրը 1072 թ. Ռոմանոս Դ Դիոգենեսի դեմ է ուղարկում զորավար Անդրոնիկոս Դուկասին, որին Ադանայում դիմակայում է Խաչատուրը: Մարտը երկար չընթացավ, քանի որ բյուզանդական զորքը բոլոր առումներով գերազանցում էր հակառակորդի զորքին: Պարտությունը կանխորոշեց Խաչատուրի ճակատագիրը, նա գերվեց Անդրոնիկոսի կողմից, իսկ Ռոմանոս Դ Դիոգենեսը ամրացել էր Ադանայի բերդում: Նա ևս շուտով անձնատուր եղավ և կայսերական որոշմամբ կուրացվեց ու հեռացավ քաղաքականությունից[2]: 1072 թ. Խաչատուրի գերի տարվելուց հետո նրա մասին պատմական աղբյուրներն այլևս տեղեկություններ չեն հաղորդվում: Նրա մասին միայն մի պատմություն է ներկայացնում Նիկեփոր Բրիենեսը, ըստ որի՝ Խաչատուրին գերելուց հետո տանում են Ադրոնիկոս զորավարի մոտ, որը «Խաչատուրին պահում էր անկալանք կալանքի մեջ»[3]:

Ըստ Գրեգուարի Անտիոքի դուքս Խաչատուրը, լինելով նշանավոր ռազմական գործիչ և զորական, հանդիսացել է նաև որպես առասպելական կերպար, դրա արձագանքները առկա են թյուրքական էպոսում (Սայիդ Բաթթալ Ղազի): Այստեղ պահպանվել են տեղեկություններ բյուզանդական կայսրերի «Asator, Takfur, Khanatus», մասին: Հ. Գրեգուարը՝գտնում է, որ էպոսում հիշատակված Asator-ին պետք է համարել Անտիոքի դուքս Խաչատուրը[4]:

Նշենք, որ էպոսում Խաչատուրի անձի նկարագրումը պայմանավորված էր դեպքերին իր անմիջական մասնակցությամբ և այն կարևոր դերակատարությամբ, որ նա հանդես բերեց հետմանազկերտյան ժամանակահատվածում:

Ի վերջո հարկ է նշել Ղ. Ալիշանն այն տեսակետ է հայտնել, Անտիոքի դուքս Խաչատուրը և Տարսոնի իշխան Ապլղարիպ Արծրունին ազգականներ էին[5]: Թեև պատմական աղբյուրներում նման տեղեկություններ չկան:

## Պեխտի և Խաչատուրի անձերի շուրջ

Պատմագիտության մեջ հայ նշանավոր զորահրամանատարների նույնացման առաջին փորձը պատկանում է Մ. Չամչեանցին. «Ի սմին ժամանակի իշխան ոմն Հայոց Շիրակունի Անեցի բնակեալ ի սահմանս Փոքուն Ասիոյ՝ Խաչատուր կամ Խուտատար անուն, վեստ կոչեցեալ՝ ցայս է աւագ իշխան, որ ի գիրս Հայոց Պեխտ կոչի, այր երևելի հզօր» [6]: Հետագայում այս տեսակետի կողմակիցները մշտապես հղել են նրան:

Ե. Քասունին ևս համարում է, որ Պեխտը և Խաչատուրը նույն անձն են: Նրա համար կռվան է այն հանքամանքը, որ Անտիոքի դուքս Նիկեփորիցեսը որոշակի ժամանակահատված պաշտոնից հեռացված է, եղել և այս գործոնը հիմք է տվել հե-

---

[1] Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 241-244, Մատթէոս Ուռհայեցի, էջ 202: Cahen C., La champagne de Mantzikert d'aprés les sources musulmanes, "Byzantion" t IX, fasc. 2., 1934, էջ 613-642:

[2] Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 244-245, Միքայել Ատտալիատես, էջ 91-92:

[3] Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 381, ծն թ. 753:

[4] Տե՛ս Գրեգուար Հ., Խաչատուր-Ասադոր, Սիոն, 1952, թ. 1-12, թարգմ. Պէրպէրեան Հ., էջ 29-31:

[5] Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան. Համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 46:

[6] Տե՛ս Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 972, Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հ. Ա, Գահիրէ, 1937, էջ 439,

տազոտողին ենթադրելու, որ այդ բացը կարող էր լրացրած լինել Խաչատուրը: Ըստ Ե. Քասունու՝ հայկական աղբյուրները Խաչատուրին հիշատակում են որպես Պեխտ, իսկ պատճառը նրա քաղկեդոնական դառնալն էր. «Թէ ինչու հայ ժամանակագիրներ ենթական կը յիշեն Պեխտ եւ ոչ թէ Խաչատուր անունով, պատճառը պէտք է փնտռել անոր յունադաւանութիւնը ընդունած ըլլալուն մէջ»[1]:

Խնդրին անդրադառնալով՝ Կ. Մաթևոսյանը ևս հավանական է համարում Պեխտի և Խաչատուրի նույն անձը լինելը: Կ. Մաթևոսյանը այս եզրահանգումն է կատարում՝ հիմնվելով Սամուել Անեցու ժամանակագրության ձեռագրերում առկա երկու տեղեկությունների վրա. «… Եւ ի ՇԺԹ (1070) Գողձախմատն աւերեաց զՍեւ լեառն և կոտորեաց զնա Գրիգոր Պիխտն ի դաշտն Հարունոյն ի մամխենուտն»: Երկրոդ հիշատակությունում նկարագրվում է Պեխտի սպանությունը. «ՇԻԱ (1072) զՊիխտն յԱնդրիոնն խեղդեցին ծառայք իւր»[2]: Այստեղ նկարագրված դեպքերն ու իրադարձությունները երկբայելի են: Հետազոտողը, հիմնվելով առաջին տեղեկության վրա և հիմնվելով բյուզանդական աղբյուրներում առակա Խաչատուրի և սելջուկների միջև տեղի ունեցած բախումների, նույնացնում է այն և հետևեցնում, որ Խաչատուրը և Պեխտը նույն անձն են: Սակայն ուշագրավ է, որ այստեղ նշվող դեպքերի թվականները չեն համապատասխանում: Խաչատուրի բախումը սելջուկների հետ տեղի է ունեցել 1069 թ., մինչդեռ վերոնշյալ ձեռագրում այն համարվում է 1070 թվականը: Երկրորդ հիշատակությունում ներկայացվում է, որ «Գրիգոր Պեխտը» խեղդամահ է արվել իր ծառաների կողմից, այնինչ ինչպես վերևում նշեցինք, Պեխտը զոհ է դարձել հույն աբեղա Աբելի ձեռքով: Ձեռագրում Պեխտի մահվան թվական հիշատակվում է 1072 թ., սակայն հայկական սկզբնաղբյուրներում այդ թիվը համարվում է 1078 թվականը:

Պեխտի և Խաչատուրի տարբեր զորականներ լինելու հանգամանքը քննել է Ժ. Լորանը, այս տեսակետի կողմակիցները հիմանկանում հետևել են նրան: Ժ. Լորանը նշում է, որ 1065 թ. ներքո հիշատակվող Անտիոքի իշխան Պեխտը և 1068 թ. հիշատակվող Խաչատուրի նույնացման համար պատմական աղբյուրներում տեղեկություններ չկան: Հետազատողը հանգել է այն եզրակացության, որ Պեխտը հանդիսանում էր ոչ թե Մեծ Անտիոքի կառավարիչը, այլ՝ Իսավրիայի Անտիոքի[3]:

Խնդրին անդրադարձել է նաև Հ. Բարթիկյանը: Նա զարմանալի է համարում այն հանգամանքը, որ հայկական աղբյուրներում Խաչատուրի մասին որևէ տեղեկություն չի հիշատակվում: Հետազոտողը նաև նշում է, որ Պեխտին սխալմամբ նույնացրել են Անտիոքի դուքս Խաչատուրի հետ[4]:

Հարցին անդրադառնալով՝ Ժ. Դեդեյանը գտնում է, որ պետք է տարբերել Պեխտին Խաչատուրից, և խոսելով Տարսոնի կառավարիչ Ապլղարիպ Արծրունու՝ 1078 թ. Անհետացման մասին, նշում է, որ նույն թվականին տեղի է ունեցել նաև Պեխտի մահը[5]:

Մենք ևս հակված ենք կարծելու, որ Պեխտը և Խաչատորը տարբեր անձինք են: Ինչպես վերևում նշեցինք, Խաչատուրի մասին 1072 թ. հետո սկզբնաղբյուրներում չկան տեղեկություններ այն բանից հետո երբ ձերբակալվեց: Իսկ հայկական աղբյուրները անդրադառնալով Պեխտին՝ տեղեկություններ հաղորդում են ընդհուպ մինչև 1078 թ.՝ նկարագրելով նրա սպանությունը իր իսկ բերդում: Բացի այդ, իշխանների զբաղեցրած տարածքները, որտեղ գործունեություն են ծավալել, ևս տարբեր են: Պեխտի Անդրիուն բերդը, որի մասին տեղեկություններ են հաղորդում սկզբնաղբյուրները, ընկած է Կիլիկիայի հյուսիսային հատվածում, Պիռամոս (Ձահան) գետի վերին հոսանքի շրջանում,

---

[1] Տե՛ս Քասունի Ե., ԺԱ. դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ-Խաչատուր եւ Վասակ Պահլաւունի, Հայկազեան հայագիտական հանդէս, 1971, էջ 126-127:

[2] Տե՛ս Մաթևոսյան Կ., Անի-Շիրակի պատմության էջեր, Ե., 2010, էջ 156-166:

[3] Տե՛ս Լորան Յ., նշվ. աշխ., էջ 303-310: Հմմտ. Գրեգուար Հ., նշվ. աշխ., էջ 29-31:

[4] Տե՛ս Հովհաննես Սկիլիցես, էջ 376, ծն թ. 710: Հմմտ. Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը, Բարթիկյան Հ., նշվ. աշխ., էջ 321, ծն թ. 51:

[5] Տե՛ս Dédéyan G., նշվ. աշխ., էջ 45-46, 335, Каждан А., Армяне в составе господсвующего класса Византийской империи в XI-XII вв., Ереван, 1975, էջ 125-126:

Մարաշից արևմուտք[1], այստեղից հետևում է, որ այս շրջանը բուն Անտիոքիհետ չենք կարող նույնացնել: Իսկ Խաչատուրը հանդիսանում էր Մեծ Անտիոքի դուքս: Այստեղ որպես ասվածի ապացույց՝ հարկ է մեջբերել Միքայել Ատտալիատեսի՝ խնդրին վերաբերող վկայությունը, որտեղ զանազանված են Անտիոքները, և պատմիչը Խաչատուրին համարում է. «Մեծ Անտիոքի կատեպան»[2]: Այս վկայությունը պետք ուղղակի իմաստով հասկանալ:

Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ Պեխտը հանդիսացել է Կիլիկիայի հյուսիսային հատվածում գտնվող Անտիոքի (Փոքր Անտիոք), իսկ Խաչատուրը Մեծ Անտիոքի դուքս և այս երկու նշանավոր ռազմական գործիչների ծավալած գործունեությունը պետք է դիտարկել առանձին:

| | Պեխտ | Խաչատուր |
|---|---|---|
| Մահ | 1078 թ. | - |
| Անհետացում | - | 1072 թ. |
| Զբաղեցրած տարածքներ | Իսավրյան Անտիոք, Անդրիուն | Մեծ Անտիոք |
| Հայկական աղբյուրների հիշատակում | Մատթեոս Ուռհայեցի, Սմբատ Սպարապետ, Վարդան Վարդապետ | - |
| Բյուզանդական աղբյուրների հիշատակում | - | Միքայել Ատտալիատես, Հովհաննես Սկիլիցես |

**Арарат Степанян, Армянские герцоги Пехт и Хачатур.** После падения Багратидского царства Ани, один из князей покинувших родину был губернатором Исаврской Антиохии Пехт, который достиг этого уровня благодаря верности Империи. Другой армянин Хачатур, который также был активен в тот же период, получил привилегию быть уполномоченным герцогом Великой Антиохии. Его роль особенно подчеркивается во время политических событий, которые произошли после битвы при Маназкерте. Из источников ясно, что деятельность Пехта и Хачатура следует рассматривать раздельно.

***Ключевые слова:*** Антиохия, Пехт, эмиграция, крепость Андрюн, заговор, проксим, дук, Хачатур, Эпиф.

**Ararat Stepanyan, Armenian Dukes Pekht and Khachatur.** After the fall of Bagratid kingdom of Ani, one of the princes who left their homeland was governor of Isaurian Antioch who reached this level thanks to the loyalty of to Empire. Another Armenian, Khachatur, who was also active during the same period, also received the privilege of being authorized by the Duke of the Great Antioch. His role is especially emphasized during the political events that took place after the Battle of Manazkert. It is clear from sources that the activities of Pekht and Khachatur should be considered separately.

***Key words:*** Antioch, Pekht, emigration, Andriou Fortress, conspiracy, proxemus, duke, Khachatur, Epiph.

[1] Տե՛ս Թ. Հակոբյան և այլն, «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 1, նշվ.աշխ., էջ 260-261:
[2] Միքայել Ատտալիատես, էջ 90: